

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ ՊԸՐՊԷՆՔԻ ԾՈՒԽԻ  
(ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ) ՄԷՋ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, Մայիս 10ին Պրրպենքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ՝ Առաջնորդարան, Սուրբ Պատարագ մատոյց Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպապեան:

Սուրբ Պատարագին հանդիսապետեց Առաջնորդ Սրբապան Հայրը: Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արպումանեան տուաւ օրուան քարոզը:

Սուրբ Պատարագի աւարտին Սրբապան Հայրը հանդիսապետեց Հոգեհանգստեան Պաշտօնին: Ապա Դպրաց Դասը թափօրով եւ «Գովեա Երուսաղէմ» շարականի երգեցողութեամբ Սրբապան Հայրը Սրբալոյս Միւռոնով Օծումը կատարեց յուշարձան Խաչքարի, որուն մեկենասը ինքն է եւ ձօնուած է ի յարգանս իր մօր՝ Տիրամայր Ժանէթ Տէրպէրեանի: Յուշարձանի կողքին գրուած է Բանաստեղծ Յովհաննէս Շիրակի հետեւեալ խօսքը «Մայրս այս մայր երկրի մէջ արեւի դէմ մի ճրագ»: Բոլոր ներկաները յուզուեցան եւ ուրախացան Սրբապան Հօր մօրը նկատմամբ ունեցած սիրոյն եւ յարգանքին համար:

Ներկաները իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին Սրբապան Հօր եւ Տիրամայր Ժանէթ Տէրպէրեանին: